

Բանալի բառեր՝ տեղական ինքնակառավարում, համայնք, օրենք, բարեփոխում, խոշորացում:

ՀՏԴ 338(479.25):351/354

ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ

Վտենախոսության թեմա՝
Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման գերակա ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում

Արսեն ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՏՀ ասպիրանտ

Գիտական դեկավար՝
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ

Հայաստանի Հանրապետությունում 1995թ. Նոյեմբերի 7-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը: Վերջինս իր էությանը նպաստելու էր վարչատարածքային ռեֆորմի իրականացմանը, քանի որ այդ օրենքի կիրարկման պահից սկսած՝ Հայաստանի Հանրապետության վարչական քարտեզի վրա հայտնվեցին միանգամայն այլ և նախկինից լիովին տարբերվող վարչատարածքային միավորներ: Խորհրդային Միությունից ժառանգած Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը մինչ վերը նշված իրավական ակտի ընդունումը, ուներ հետևյալ կառուցվածքը: Այն է՝ Հայաստանի Հանրապետությունը կազմված էր 37 վարչական շրջաններից, 28 քաղաքներից, 30 քաղաքատիպ ավաններից և շուրջ 930 գյուղական բնակավայրերից:

Քաղաքների մի մասը համարվում էին հանրապետական ենթակայության քաղաքներ, այսինքն՝ ենթարկվում էին շրջանային գործադիր մարմիններին, իսկ մյուս մասը շրջանային ենթակայության քաղաքներ էին, այսինքն՝ ենթարկվում էին շրջանային գործադիր իշխանությանը: Գյուղական բնակավայրերը կառավարվում էին գյուղական խորհուրդների կողմից, որոնք որպես կանոն՝ ստեղծվում էին մի քանի գյուղերի համար մեկ գյուղական խորհուրդ ստեղծելու հիմունքով, այսինքն՝ 5-6 գյուղական բնակավայր ուներ մեկ գյուղական խորհուրդ, որի նստավայրը գտնվում էր տվյալ գյուղական խորհրդի կազմի մեջ այն գյուղական բնակավայրում, որն ուներ առավել մեծ բնակչություն և մյուս բնակավայրերի նկատմամբ ուներ առավել հարմար աշխարհագրական դիրք: Քաղաքները կառավարվում էին քաղաքային խորհուրդների, իսկ քաղաքատիպ ավանները՝ ավանային խորհուրդների կողմից: Իրենց հերթին հանրապետության ամենամեծ վարչական միավորները՝ շրջանները, կառավարվում էին շրջանային խորհուրդների կողմից, և անմիջականորեն ենթարկվում էին հանրապետական գործադիր մարմիններին: Ինչպես հետխորհրդային մյուս պետությունները, Հայաստանը ևս, անկախության իրազեկումից հետո (1991թ. սեպտեմբերի 21), սկսեց իրականացնել նոր հասարակարգի ձևավորման գործընթացները: Դա ենթադրում էր բարեփոխումների մշակում և իրականացում, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքական համակարգը, պետական կառավարումը և տնտեսությունը, ինչպես նաև՝ շուկայական տնտեսության նոր ինստիտուտների ձևավորումը: Բարեփոխումների շարքում հատուկ տեղ էր զբաղվում տեղական ինքնակառավարման նոր համակարգի ներդրումը, որը և ձևավորվեց կառավարման համակարգի ապակենտրոնացման արդյունքում[3]: Տեղական մակարդակում ստեղծվեցին կառավարման նոր մարմիններ, որոնք ունեն իրենց՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակը՝ համապատասխան ֆինանսական աղբյուրներով:

1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված ՀՀ Սահմանադրությունը ամրագրեց նոր վարչատարածքային բաժանման կառուցվածք և նոր իրավական ինստիտուտի ձևավորում՝ այն է, տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում:

Սահմանադրությամբ ամրագրված նոր վարչատարածքային բաժանումն իրենից ենթադրում է երկաստիճան համակարգ, այն է՝ մարզեր և համայնքներ, սակայն այս երկու վարչատարածքային միավորները գործում են իրարից անկախ, և տարբերվում են իրենց կառուցվածքով, գործառնությունների շրջանակներով և կազմավորման սկզբունքներով: Մարզերը դեկավարվում են հանրապետական գործադիր տարածքային մարմինների՝ մարզպետարանների կողմից, որոնք իրականացնում են ՀՀ կառավարության քաղաքականությունը համապատասխան ոլորտներով տվյալ մարզի վարչական տարածքում: Հայաստանի Հանրապետությունը կազմված է թվով 10 մարզերից, որոնք կազմավորվել են պատմական Հայաստանի տվյալ տարածքներին համանուն պատմական տարածքում, կրում են դրանց համահունչ անունները, և ըստ կառուցվածքի իրենց մեջ ներառում են նախկին շրջաններից մի քանիսը, ըստ տվյալ տարածքի համապատասխանության:

Մարզերի կազմում գտնվող նախկին շրջանները այժմ համարվում են տարածաշրջաններ, և յուրաքանչյուր տարածաշրջանում մարզի ղեկավարը՝ մարզպետն ունի ներկայացուցիչ, որի նստավայրը համարվում է նախկին շրջկենտրոնի տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքը:

Վարչատարածքային վերը նշված փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետություն ուներ 915 համայնք և շուրջ 1000 բնակավայր: Տարիների ընթացքում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը զուգընթաց, ամփոստելի դարձավ փոքր համայնքներով զարգացում չունեցող փաստը:

Գործող վարչատարածքային բաժանումը լուրջ և եական խոչընդոտ է հանդիսանում համայնքների կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար: Չարգացման այս փուլում տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում պատրաստ չէ ապակենտրոնացման հետագա խորացմանը, որն առաջին հերթին ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմիններին լրացուցիչ լիազորությունների տրամադրում: Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառը տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածության բարձր աստիճանն է, փոքրաթիվ բնակչությամբ գյուղական համայնքների գերակշռող թվով: Համակարգի արդյունավետ գործունեությունը մեծապես պայմանավորված է համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման սկզբունքի ընտրությամբ: Հաշվի առնելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ Հայաստանում տեղական ինքնակառավարման զարգացման ընթացիկ մակարդակը՝ ենթադրվում է կիրառել կամավոր և պարտադիր ձևերի համակցված տարբերակը: Անցած բարեփոխումների վերլուծության իրավիճակը ցույց է տալիս, որ ապակենտրոնացման խորացմանն ուղղված հետագա քայլերի ճանապարհին առկա են մի շարք լուրջ խոչընդոտներ: Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի կայացումից ի վեր, առանցքային հիմնախնդիրներից մեկը, վարչատարածքային կառուցվածքն է, ավելի կոնկրետ՝ նրա մասնատվածության բարձր աստիճանը: 915 համայնքներից 866-ը գյուղական էր, որոնցից մեծամասնությունում բնակչությանը տրամադրվող ծառայություններից շատերը կամ իրականացվում են ցածր մակարդակով, կամ էլ ընդհանրապես չեն իրականացվում: Հայաստանյան տեղական ինքնակառավարման համակարգը դասվում է բաղաբապետ-խորհուրդ տիպին, ուժեղ բաղաբապետ տարբերակով: Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ համայնքի ղեկավարն ու ավագանին: Վերջինը՝ ներկայացուցչական, իսկ համայնքի ղեկավարը՝ գործադիր մարմին է:

Հետևաբար՝ համակարգային լուծումների անհրաժեշտությունն անխուսափելի էր: Այդ էր թերևս հիմնական պատճառը, որ ՀՀ կառավարությունը 2011թ. նոյեմբերի 10-ի թիվ 44 արձանագրային որոշմամբ հաստատեց «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը: Հայեցակարգից բխող 2015թ. Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնեց և կազմակերպեց համայնքների խոշորացման պիլոտային ծրագիր, որով նախատեսվեց 3 խոշորացված համայնքների փնջեր ձևավորել: 2015թ. ՀՀ-ում արդեն գործող 2005թ. Սահմանադրության համաձայն, համայնքները միավորելիս կամ բաժանելիս ՀՀ կառավարությունը տվյալ համայնքներում նշանակում և անցկացնում է տեղական հանրաքվեներ, որոնց արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը և ներկայացնում ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը: Սակայն նույն Սահմանադրության համաձայն՝ տեղական հանրաքվեի արդյունքները կրում էին ոչ պարտադիր բնույթ, ուստի և համարվում էին խորհրդատվական: Այս համատեքստում նախաձեռնված պիլոտային ծրագրի իրականացման նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Տաթև, ՀՀ Լոռու մարզի Թումանյան և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքային համախումբն ընդգրկող համայնքներում նշանակվեցին և անցկացվեցին տեղական հանրաքվեներ, որոնց միջինացված արդյունքները հեռու էին ակնկալվող արդյունքներից: Համայնքների բնակչության առավել մեծ զանգվածը կողմ էր արտահայտվել համայնքների միավորման հարցին: Ըստ էության, տեղական հանրաքվեներին հաջորդեց օրենսդրական նախաձեռնության գործընթացը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը արդեն իսկ 2016թ. փետրվար ամսին ունեցավ առաջին խոշորացված երեք համայնքները, նախկին 22 համայնքների միավորումը 3 խոշորացված համայնքների իսկում:

Վերը նշված պիլոտային ծրագրերի հաջող իրականացումից հետո, 2016թ. հունիսի 14-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ընդունեց «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով Հայաստանի Հանրապետության թվով 7 մարզերի 136 բնակավայրեր միավորվեցին 15 խոշորացված համայնքների խմբերում:

Վարչատարածքային բարեփոխումների գործընթացը կրում է շարունակական բնույթ, և այդ են վկայում ՀՀ կառավարության գործողությունները, եւ ըստ որոնց՝ բոլորովին վերջերս, 2016թ. մայիսի 18-ի ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացավ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից ներկայացված «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծային փաթեթը: Վերջինս իր մեջ ներառում է շուրջ 361 համայնքների կամ 400 և ավելի բնակավայրերի խոշորացում թվով 30 խոշորացված համայնքների խմբերում: Այս խոշորածավալ վարչատարածքային բարեփոխումը նախատեսվում է իրականացնել 2017թ. աշնանը, որի արդյունքում այսօր գործող 793 համայնքներից 2017 թվականի վերջին կունենանք թվով 432 համայնք:

2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ Սահմանադրության 9-րդ գլխում կատարված փոփոխություններն ուղղված էին տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը, ժողովրդավարացմանը, ՀՀ օրենսդրությունը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքներին համապատասխանեցմանը, եւ արձագանք նաեւ այն դրույթների ու առաջարկությունների, որոնք ձեւակերպված էին ՀՀ և ԵՄ համագործակցության համաձայնագրի շրջանակում:

Համայնքների զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը ՏԻՄ-երի կարողությունների ձևավորումն ու ամրապնդումն է: Միայն ՀՀ օրենքով ՏԻՄ-երին լիազորությունների տրամադրումը բավարար չէ իրական ժողովրդավարության հաստատման, տեղական ինքնակառավարման համակարգի և համայնքների զարգացման համար: Հետևաբար՝ այդ նպատակով անհրաժեշտ էր ձեւավորել ՏԻՄ-երի կարողությունները, որի կարևոր պայմաններից մեկը համայնքային ծառայողների մշտական գործող ուսուցման համակարգի ստեղծումն է: 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով ամրագրվում են Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվում են համայնքային ծառայության պաշտոնների ու դասային աստիճանների

դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, համայնքային ծառայողների ատեստավորման եւ վերապատրաստման, համայնքային ծառայության կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման ու ղեկավարման, ինչպես նաև՝ դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

Համայնքների աշխատակազմերի հավաքագրման իմաստով՝ հաստատվել է ՀՀ բոլոր համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերը: Անվանացանկերում նախատեսված համայնքային ծառայողների պաշտոններում նշանակումները կատարվում են օրենքով սահմանված կարգով («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 42-43): Իսկ թափուր պաշտոն առաջնապու դեպքում, դրանք համարվում են մրցույթով:

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում անցած 20 տարիների ընթացքում ունի զգալի ձեռքբերումներ և նվաճումներ: Սակայն, ժամանակի մարտահրավերները ներկայացնում են նոր, ավելի մեծ պահանջներ՝ այդ համակարգի հետագա զարգացման, հզորացման և ժողովրդավարացման նկատմամբ:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն ուղղակիորեն կապված է կառավարման ապակենտրոնացման և ժողովրդավարացման ընդհանուր գործընթացների խորացման հետ: Հետեւաբար՝ կարևորվում է տեղական ինքնակառավարման համակարգում համայնքի կառավարման ռազմավարական արդյունավետ համակարգի կայացումը, ինչը մեծապես պայմանավորված է համայնքի ավագանու և ղեկավարի փոխհարաբերություններով ու համագործակցությամբ, նրանց միջև հակակշիռների և զսպումների լիարժեք ընթացակարգերով և գործունակ կառուցակարգերով:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, հետևողականորեն անհրաժեշտ է կիրառել.

- տեղական ինքնակառավարման ոլորտում միջազգային գործիքները, այդ թվում՝ Եւ Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան, իշխանության ապակենտրոնացման միջազգային լավագույն փորձը՝ դրանց վերլուծության, տեղայնացման և ներդրման միջոցով.

- ապահովել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության իրականացման համար պատասխանատու մարմինների արդյունավետ և համակարգված գործունեությունը՝ այդ մարմինների գործառնությունների տարանջատման և դրանց միջև արդյունավետ համագործակցության ապահովման միջոցով.

- համաչափորեն լուծել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության գերակա խնդիրները՝ վարչական և ֆինակալ ապակենտրոնացումը, համայնքների հզորացումն ու տեղական ժողովրդավարության զարգացումը՝ ՀՀ օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման և զարգացման ընթացքը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ երեք փուլերի՝

- 1995-2001թթ.՝ տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման շրջան, որի ընթացքում մշակվեց դրան վերաբերող օրենսդրական և ենթօրենսդրական դաշտը, ներդրվեցին տեղական ինքնակառավարման ինստիտուտները, գործարկվեցին վարչական, կադրային, ֆինանսական մեխանիզմները, ձևավորվեց այդ ոլորտում հայրենական առաջին փորձը:

- 2002-2011թթ., որի մեկնարկը տրվեց այն ժամանակ, երբ Հայաստանն անդամագրվեց Եվրոպայի խորհրդին և բազմաթիվ համաձայնագրերից ու կոնվենցիաներից բացի, ստորագրեց նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան: 2002թ. ընդունվեց նաև ՀՀ նոր՝ երկրորդ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» որը միտված էր տեղական ինքնակառավարման համակարգի անկախության և ինքնուրույնության մեծացմանը, ֆինանսական և վարչական կարողությունների ընդլայնմանը, համայնքային մակարդակում ժողովրդավարության զարգացմանը: ՀՀ նոր օրենքն ապահովեց տարբեր ոլորտներում համայնքի ղեկավարի լիազորությունների ընդլայնման, ավագանու ինստիտուտի կայացման, ՏԻՄ-երի՝ պետական և տարածքային կառավարման մարմիններից անկախ և ինքնուրույն գործելու զգալի փոփոխություններ: Այդ ուղղությամբ կարևոր քայլեր էին նաև 2005թ. սահմանադրական բարեփոխումները, որտեղ Սահմանադրության համապատասխան դրույթներով ամրագրվեցին ՏԻՄ-երի ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը նախ և առաջ տվյալ համայնքի բնակչության առջև: Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման այս փուլի համար հատկանշական էր նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումը (2008թ.), որի համաձայն՝ Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ, և վերջինիս ինքնակառավարման ոլորտում ամրագրվեցին յուրօրինակ պայմաններ ու սկզբունքներ, որոնք բնորոշ էին ՀՀ մնացյալ համայնքների ինքնակառավարման համակարգին:

- 2011 թվականից մինչ օրս: Այս փուլը սկզբնավորվեց տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման նոր ռազմավարությամբ: Տեղական ինքնակառավարման համակարգում առաջացած դժվարությունները, որոնք պայմանավորված էին ՀՀ վարչատարածքային բաժանմանը վերաբերող խնդիրներով, իրավական ոլորտի բացթողումներով, ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության ցածր մակարդակով, այդ ոլորտում նոր և կարևոր բարեփոխումներ նախատեսելու պատճառ դարձան: Մասնավորապես, 2011թ. ՀՀ կառավարությունը թիվ 44 արձանագրային որոշմամբ ընդունեց Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը՝ հիմք դնելով տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հերթական փուլին: Արդեն իսկ ընթացող զարգացումները թույլ են տալիս փաստել, որ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման նոր փուլի հիմքում ընկած են հենց այդ բարեփոխումները և դրանց միջոցով ներկայացվող ու ապահովվող հիմնական գաղափարներն ու սկզբունքները: Ըստ այդմ, 2015թ. Սահմանադրության փոփոխություններից բխող՝ 2016թ. մշակվեցին «Տեղական ինքնակառավարման մասին» «Տեղական տուրքերի և վճարների մասին» «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքները, որոնց ընդունմամբ ու կիրարկմամբ տեղական ինքնակառավարման համակարգը թևակոխեց զարգացման նոր փուլ:

Կարծում ենք, որ համակարգային բարեփոխումներում մեծ առաջընթաց կնկատվի համայնքների խոշորացմամբ ու միջհամայնքային միավորումների ձևավորմամբ, որոնք կնպաստեն ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի առջև

Ծառացած հիմնական խնդիրների լուծմանը, իսկ դրանք բավականին շատ են և պայմանավորված են բազմաթիվ փոքր համայնքների առկայությամբ, դրանց ռեսուրսների սղությամբ ու սահմանափակ կարողություններով, օրենքով նախատեսված լիազորություններն ինքնուրույն իրագործելու անհնարինությամբ, բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների ցածր որակով կամ դրանց իսպառ բացակայությամբ, և այլնով: Համայնքների խոշորացումը կարող է ապահովել փոքրաթիվ բնակչություն և սուղ բյուջե ունեցող համայնքների ուժերի, ռեսուրսների ու կարողությունների մեկտեղումն ու առկա խնդիրների համատեղ լուծումը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև համայնքների խոշորացման հնարավոր բացասական հետևանքները, ինչպիսիք են՝ համայնքային ծառայողների շրջանում գործազրկության առաջացումը, բնակչությունից համայնքային ծառայությունների կամ դրանք մատուցող կառույցների տարածքային հեռավորության մեծացումը և այլն: Միաժամանակ՝ նախապես պլանավորել այդ հիմնախնդիրները հաղթահարելու կամ դրանց ազդեցությունը մեղմացնելու մեխանիզմները, ինչպես նաև համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման ընթացքում առաջնորդվել տարբերակված մոտեցմամբ՝ հաշվի առնելով համայնքների բնակիչների մշակութային ու էթնիկ համատեղելիությունը, համայնքների միջև հեռավորությունը, համագործակցության նախկին փորձը ու այդ ընթացքում առաջացած խնդիրները, ձևավորելով ՏԻՄ-երի և համայնքային ծառայողների արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայմաններ: ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի հետագա և կայուն զարգացման առումով կարևոր է նաև տեղական ինքնակառավարման՝ երկրի սոցիալ-տնտեսական պայմաններին, ինչպես նաև մշակութային առանձնահատկություններին առավել համապատասխան մոդելի ընտրության հարցը:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Տեղական ինքնակառավարման բարեփոխումները, Դ. Թումանյան, Եր.: Նոյյան Տապան, 2011
2. ՀՀ Մունիցիպալ իրավունք, Ա.Շ.Հարությունյան, Երևան 2004, ԵՊՀ հրատարակչ., 19 էջ:
3. <http://www.publiccouncil.am/hy/documents/item/2011/06/10/11222/>
4. ՀՀ կառավարությունը 2011թ. նոյեմբերի 10-ի թիվ 44 արձանագրային որոշմամբ հաստատեց Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը:
5. <http://mtad.am/hy/the-lsg>
6. <http://cfoa.am/>

Ներկայացվել է 10.08.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.